անհկուն մաքառումը։ Նրա հոգու գեղեցկությունն ու պայծառ հրապարը։ Շեւչենկն գրականության ժողովրդայնության մեծ գրոշակակիրն էր, ռեալիստական-դեմոկրատական գաղափարների ջերմ պաշտպանն ու անվեհեր տարածողը ժողովրդի ամենալայն խավերում։ Տարաս Շեւչենկոն իր հանճարեղ ստեղծագործությամբ աշխարհին ցույց տվեց ուկրաինական ժողովրդի հոգեւոր մեծ ու անսպառ հարստությունը, նրա հոգու արիությունը, անհուն մարդասիրությունը։

Ժողովրդական անմահ երգիչը անգնահատելի դեր խաղաց հայերեն գրականության զարգացման և հասարակական կյանքի առաջընթացի մեջ։ Բայց նրա ստեղծագործության նշանակությունը դուրս է գալիս իր երկրի սահմաններից։ Մեծ բանաստեղծը երազում էր այն ժամանակների մասին, երբ Ռուսաստանի ժողովուրդները կմիավորվեն հաշտ ու խաղաղ, եղբայրական հզոր մի ընտանիքում և կապրեն ազատ ու երջանիկ։ Ահա թե ինչու նրա անունը հարազատ ու թանկ է մեր հայրենիքի՝ մեծ Կորգարի երազած ազատ ու եղբայրական հզոր ընտանիքի բոլոր ժողովուրդների համար, ահա թե ինչու նա ապրում և հարատևում է առաջավոր մարդկության բոլոր անմահ երգիչների հետ միասին։

Ուկրաինական մեծ երգիչը եղել և մնում է նաև հայ ժողովրդի ամենասիրելի պոետներից մեկը։ Դեռևս անցյալ դարի 70-ական թվականներից նրա ստեղծագործությունները թարգմանվել են հայերեն։ Ավելի քան կես դար առաջ հայ իրականության մեջ Տարաս Շեւչենկոյին դիպուկ կերպով անվանեցին «Ուկրաինական Պրոմեթեոս»։ Հանճարեղ բանաստեղծի ստեղծագործությունը բազմիցս թարգմանվել և մեծ ոգեւորությամբ հրատարակվել է Սովետական Հայաստանում։ Տարաս Շեւչենկոն, վերջում ասաց զեկուցողը, ուկրաինական ժողովրդի սիրան է։ Բոցաշունչ հայրենասիրությամբ, ազատասիրությամբ ոգորված նրա հանճարեղ պոեմների ու բանաստեղծությունները դարձել են բոլոր ժողովուրդների սեփականությունը։

* * *

Ուկրաինական մեծ բանաստեղծ Տարաս Շեւչենկոյի ծննդյան 150-ամյակին էր նվիրված Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի կազմակերպած գիտական սեսիան, որը կայացավ մարտի 9-ին։ Սեսիան ներածական խոսքով բացեց բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Մ. Գ. Ներսիսյանը, որը բնութագրեց ուկրաինական ժողովրդի մեծ գավակին՝ որպես հանճարեղ բանաստեղծի, ակամավոր ռեալիստ-դեմոկրատի, ազատության և հումանիզմի մեծ երգչի։

«Տարաս Շեւչենկոն որպես մեծ հումանիստ մտածող» զեկուցումով սեսիայում հանդես եկավ Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Կարինյանը։ Վերլուծելով մեծ գրողի գեղարվեստական հարուստ ժառանգությունը, նա բացահայտեց այն նշանակալից դերը, որ կատարել է անմահ Կորգարը իր ստեղծագործությամբ հասարակական մտքի զարգացման, հումանիզմի, ազատասիրության և ժողովրդասիրությանվեհ գաղափարների տարածման գործում։

Բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Արեշյանը զեկուցում կարդաց «Տարաս Շեւչենկոն և հայ գրականությունը» թեմայով։ Նա առանձնապես կանգ առավ ինչպես նախասովետական շրջանում, այնպես էլ մեր օրերում ժողովրդական մեծ երգչի գործերից կատարված հայերեն թարգմանությունների վրա, ցույց տվեց, թե ինչպիսի մեծ ուշադրության և բարձր գնահատության է արժանացել դեմոկրատիզմի ու հումանիզմի ոգով հագեցած նրա փայլուն ստեղծագործությունը անցյալի առաջադիմական հայ մտքում, ցուցահեռներ անցկացրեց Տ. Շեւչենկոյի և Մ. Նալբանդյանի կյանքի և գործունեության մի շարք կողմերի մեջ։

Տարաս Շեւչենկոն, հանճարեղ բանաստեղծ լինելուց բացի, ժողովրդականություն է վայելել նաև որպես նկարիչ։ Իր բազմաթիվ նկարներում նա երգել է ժողովրդի վիշտն ու տառապանքը, նրա ստրկական վիճակը և ազատության լուսավոր երազանքը։ Նա մեծ հումանիստ և ակամավոր դեմոկրատ մտածող էր նաև իր ստեղծած կտավներով։ Այս հարցերը հանգամանորեն լուսաբանվեցին «Տարաս Շեւչենկոն և արվեստը» զեկուցման մեջ, որ սեսիայում կարդաց Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ Ռ. Դրամբյանը։

Ա. Գ.

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ ՆՎԻՐՎԱԾ ԳԱԼԻԼԵՈ ԳԱԼԻԼԵՅԻ ԾՆՆԴՅԱՆ 400-ԱՄՅԱԿԻՆ

1964 թ. մարտի 5-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի Նախագահությանը առընթեր Բնագիտության և տեխնիկայի պատմության խորհրդի գիտական սեսիան, որը նվիրված էր իտալական մեծ գիտնական աստղագետ, ֆիզիկոս, մաթեմատիկոս ու փիլիսոփա Գալիլեո Գալիլեյի ծննդյան 400-ամյակին։

Բացելով սեսիան, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ ակադեմիկոս Վ. Համբարձումյանը նշեց այն մեծ գերը, որ Գալիլեյը խաղացել է գիտական ուսումնասիրության նոր՝ փորձի վրա հիմնված մեթոդոլոգիայի մշակման, արևակենտրոն սիստեմի հաղթանակման, ֆիզիկայում նոր ճյուղերի հիմնադրման ու աստղագիտության համար ուսումնասիրման ընդարձակ հորիզոններ բացելու գործում։

Մեծ գիտնականի կյանքի ու գործունեության մասին սեսիայում զեկուցեց ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր Գ. Պետրոսյանը։ Այնուհետև զեկուցումներով հանդես եկան Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Օ. Սապոնջյանը («Գալիլեյը որպես մեխանիկայի հիմնադիր») և ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու Ա. Քալլօղլյանը («Գալիլեյը աստղագիտության պատմության մեջ»)։

Գալիլեո Գալիլեյը ապրել ու գործել է այնպիսի ժամանակաշրջանում, երբ մի կողմից մարդկային առաջավոր միտքը ըմբոստացել էր վաղուց իր գարն ապրած արիստոտելյան ու պտղոմեոսյան հակագիտական դոգմաների դեմ, իսկ մյուս կողմից կաթոլիկական եկեղեցու ապաստավորները, կանգ չառնելով ոչ մի ստոր միջոցի առաջ, աշխատում էին ամեն կերպ արգելակել այդ առաջընթացը և ոչնչացնել այն ամենը, ինչ այս կամ այն չափով կարող էր սասանել կրոնի ու «սուրբ» գրքերի հեղինակությունը։

Գալիլեյին կանգնեցրին ինկվիզիցիայի դատարանի առաջ. նրա հիշողության մեջ դեռևս թարմ էին գիտության մարտիկների կենդանի այրման հրեշավոր տեսարանները։ Սակայն նա չընկճվեց և մինչև խոր ծերություն՝ մեկուսացման պայմաններում, նույնիսկ տեսողությունից լրիվ զրկվելուց հետո էլ շարունակում էր ստեղծագործել։

Գալիլեյը կարևոր ուսումնասիրություններ կատարեց թեք հարթությամբ շարժվող և աղատ ընկնող մարմինների շարժումների օրինաչափությունները բացահայտելու ուղղությամբ։ Նա մեկնաբանեց մեխանիկայի (դինամիկայի) հիմնական սկզբունքները, որոնք հետագայում մշակվեցին Ի. Նյուտոնի կողմից որպես շարժման երեք օրենքներ։

Առանձնապես կարևոր էին Գալիլեյի աշխատանքները օպտիկայի բնագավառում։ Իր ձեռքով պատրաստած հեռադիտակն ուղղելով երկինք, կարճ ժամանակամիջոցում նա կարևոր հայտնագործություններ կատարեց աստղագիտության մեջ։ Գալիլեյը նկատեց, որ Արեգակի մակերևույթի վրա կան բծեր։ Վերջիններիս շարժմամբ նա որոշեց Արեգակի պտտման պարբերությունը։ Մի կաթիլը հեռադիտակում երևաց կազմված բազում աստղերից։ Գալիլեյը Լուսնի վրա նկատեց լեռներ և չափեց նրանց բարձրությունները։ Դրանով հերքվեց երկնային մարմինների «կատարյալ» գնդաձևությունը և ջնջվեց երկրային ու երկնային մարմինների միջև մինչև այդ ընդունված անջրպետը։ Գալիլեյը Վեներան հեռադիտակում տեսավ փուլերով, որոնք ունեին տարբեր անկյունային տրամագծեր։ Դրանից անմիջապես հետևում էր, որ Վեներան պտտվում է ոչ թե Երկրի, այլ Արեգակի շուրջը։ Յուպիտերի շուրջը Գալիլեյը հայտնաբերեց չորս արբանյակ։ Դա ուժեղ հարված էր կոպերնիկոսյան տեսության հակառակորդներին, քանի որ վերջիններս պնդում էին, թե իբր Երկիրը Արեգակի շուրջը չի կարող պտտվել, որովհետև այդ դեպքում Երկրի շուրջը պտտվող Լուսինը ետ կմնար։ Այժմ պարզվում էր, որ չնայած Յուպիտերն ունի չորս լուսիններ և շարժվում է տարածության մեջ, սակայն այդ սիստեմը մնում է միանգամայն կայուն։

Այս բոլորը փորձնականորեն հաստատում էին արևակենտրոն սիստեմի ճշտությունը, վերացական ենթադրություններից դարձնում այն գիտականորեն հիմնավորված տեսություն։

Գալիլեյի ապրած ժամանակաշրջանից անցել են հարյուրավոր տարիներ։ Աստղագիտության մեջ և մեխանիկայում կատարվել են բազմաթիվ նոր ու կարևոր հայտնագործություններ։ Այժմ հեռադիտակների խոշորացումը չափվում է ոչ թե միավորներով ու տասնյակներով, այլ տասնյակ հազարներով։ Գիտության տարբեր բնագավառների և մասնավորապես տիեզերքի ուսումնասիրման ու երկնային մարմինների շարժման օրինաչափությունների մանրամասն բացահայտումները հանգեցրին տիեզերական թռիչքների պրակտիկ իրագործմանը մեր օրերում։ Սակայն այսօր էլ Գալիլեյի ուսումնասիրությունների մեծ մասը իր թարմությունը չի կորցրել։ Ամբողջ աշխարհի գիտնականները միշտ պատկառանքով են հիշում բնական գիտությունների հիմնադիրներից մեկի, գիտության անխոնջ մարտիկի՝ Գալիլեո Գալիլեյի մշտապես անմար անունը։

Բ. Թումանյան